**«Ա/Ձ Ռուբեն Անդրեասյան**
**ՀՎՀՀ 63197487**
**(Ք. Վանաձոր Ավետիսյան 17**
**Հեռախոս +(374)98643667)**

# Ծ Ա Ն Ու Ց Ու Մ

## Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Թալինի համայնքապետարանի և «Ա/Ձ Ռուբեն Անդրեասյան»-ի միջև 2023 թվականի հունիսի 26-ին կնքվել է «ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՊՁԲ-23/63-02» ծածկագրով ապրանքների մատակարարման գնման պայմանագիր (այսուհետ Պայմանագիր), որի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ մատակարարը ստանձնում է **Թալին համայնքի ենթակայության մանկապարտեզների համար տարբեր տեսակի խաղալիքների ձեռքբերման մատակարարման** պարտավորությունը՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքները:

«Ա/Ձ Ռուբեն Անդրեասյան»-ի կողմից չեն պահպանվել պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետները, հրաժարվել է մատակարարել **13, 14, 15, 20, 21, 22, 23, 24, 34, 38, 39, 46, 47** չափաբաժիններ մասով ապրանքները և պայմանագրի հ.1 հավելվածով սահմանված պահանջները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը.

ա) մատակարարված ապրանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է մատակարարման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ««Ա/Ձ Ռուբեն Անդրեասյան»-ը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով՝ Պատվիրատուն միակողմանի մասնակի լուծում է պայմանագիրը՝ համարելով այն լուծված ընդհանուր 544800/հինգ հարյուր քառասունչորս հազար ութ հարյուր/ՀՀ դրամի չափով՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների

գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Այսպիսով «Ա/Ձ Ռուբեն Անդրեասյան»-ին տրվում է 10/տաս օրացուցային օր տուժանքով սահմանված որակավորման ապահովման 87300/ութսունյոթ հազար երեք հարյուր/ՀՀ դրամը և պայմանագրի ապահովման 58200/հիսունութ հազար երկու հարյուր/ՀՀ դրամ գումարները Թալինի համայնքապետարանի 900462151096 հաշվին փոխանցելու նպատակով

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի համաձայն «Ա/Ձ Ռուբեն Անդրեասյան»-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը Պատվիրատուն կներկայացնի լիազոր մարմին, իսկ մատակարարի կողմից պայմանագիր կնքելու նպատակով ներկայացրած որոկավորման և պայմանագրի ապահովումները միկողմանի հաստատված հայտարարության տուժանքի ձևով կներկայացվեն մատակարարի բանկ նշված գումարները գանձելու նպատակով:

Ընդ որում, եթե՝

- սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.
- մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**

**Թալին համայնքի ղեկավար** **Տ.Սափեյան**